կրկնվելը։ Նման ըմբռնումները մեծ մասամբ մնացուկներ էին ամենանախնական հասարակական մտածողության, որի համաձայն մահացածների հոգիները դեռևս չեն անջատված մի այլ աշխարհ՝ այս աշխարհից չեն կտրված և դեռ ապրում են կենդանի մնացողների հետ ընդհանուր, անբաժան կյանքով։ Այստեղ մարդն ու ննջեցյալները պահպանում էին իրար հետ մշտական կապ։ Այն նախնական աշխարհայացքը Լևի Բրյուլը անվանում է միստիկ[95], իսկ անգլիական սոցիոլոգները, օրինակ՝ Marrett-ը և անիմատիստիկ, տարբերելով ավելի ուշ շրջանի աշխարհայացքից՝ անիմիզմից, երբ արդեն ննջեցյալների հոգիները ստանում էին անկախ գոյություն և նրանց զետեղում էին մարդկային աշխարհից տարբեր հատուկ աշխարհում։

Այն, որ հոգիները կապված են մնում առավելապես իրենց հարազատների և համայնքի հետ, ավանդաբար անցել է ավելի ուշ, արդեն տոհմատիրական ժամանակներին, երբ տոհմի գաղափարով ընդգրկվում էին և՛ կենդանի, և՛ հանգուցյալ արյունակիցները. սկիզբ է դրվում նախնիների պաշտամունքին։ Ավելի ուշ, հասարակական շերտավորման զարգացման հետ անքակտելի կապակցությամբ ծագում է այն հավատալիքը, թե բոլոր մարդկանց հոգիները միասին չեն հեռանում միևնույն աշխարհը՝ ստորերկրյա կամ վերերկրյա[96], այլ այդ աշխարհում տարբերություն է դրվում ննջեցյալների մեջ, նայած այս աշխարհում վարած կյանքին և մահվան հանգամանքներին։ Զանգեզուրցի հայի աշխարհըմբռնման մեջ միստիկ կամ անիմատիստիկ հասկացողության հետ միահյուսված է և այս վերջին պատկերավորումը՝ ըստ կյանքում ունեցած վարքագծի տեղաբաշխվելը մյուս աշխարհում։ Ինքնասպաններին տեղ չէր տրվում ընդհանուր հանգստարանում և նրանց հոգիները շարունակ անհանգիստ էին և շրջում էին դառնացած և ոխակալ։ Ինքնասպան հոգուց պետք էր սպասել շարություն, դժբախտություն և անհաջողություն։ Բռնի մահով սպանվածների կամ կայծակնահար, նաև անհաղորդ մեռածների հոգիներն էլ կարծես թե մյուսներից անջատված էին համարվում և դեռ բոլորովին այլ աշխարհ չտեղափոխված[97], վերջնականապես գերեզմանից չանջատված վախով և առհասարակ այլևայլ հիվանդություններով բռնվածներին, այդպիսի ննջեցյալի գերեզմանաքարի փոսիկից կամ գերեզմանաքարի վրա դրած ամանից ջուր էին վերցնում, ինչպես վերը նշեցինք, նրանով վախն ու հիվանդությունը վանում՝ թաղվածի հոգուն էին հանձնում։

Զանգեզուրցի հայերի մեջ քրիստոնեական գաղափարախոսության ազդեցության ներքո կերտվել է նաև այն հասկացողությունը, որ մյուս աշխարհ անցնելիս, մաղե կամուրջի օգնությամբ, հոգիները ենթարկվում էին մի տեսակ բարոյական քննության։ Մեղքերից թեթև հոգիները դյուրին էին անցնում կամուրջով մյուս կողմը՝ դրախտ. մեղքերով ծանրաբեռնվածների ոտքի տակ մաղե կամուրջը կտրվում էր և նրանք ընկնում էին հավիտենական տանջանք-

---

[95] *Леви-Брюль Л. П.*, Первобытное мышление, 1930, «Атеист», էջ 261 և հետև։

[96] Գուցե այսպիսի անխտիր բոլոր հոգիների աշխարհն էր (հմմտ. հույների հանդերձյալ ստորերկրյա աշխարհը) հին գրականության մեջ հիշատակվող Սանդարամետ անգնդոց։ Հին հայերը դասում էին մեռելների հոգիները Սանդարամետի անդունդի՝ դժոխքի ծոցի ստորերկրյա վայրի, երկրի խորքի մեջ։ Բայց մեզ ստույգ հայտնի չէ, բաժանվո՞ւմ էր արդյոք նա երկու մասի՝ մեղավորների համար՝ դժոխք, արդարների համար՝ դրախտ։

[97] Օրինակ՝ ըստ Բախաու (Կենտրոնական Բոռնեո) ցեղի կարծիքի բռնի մահով մեռածները սրի բարակ բերանի հաստություն ունեցող կամուրջին դեռ չհասած և նրա վրայով դեռ չանցած՝ անջատվում են մյուս հոգիներից և հեռանում մի այլ վայր։ (*Харузина В.*, Энтография, т. I, էջ 412)։